* * *

Սիրելի ընկեր, որ պատահեցիր
Իմ և մուսայիս վեճի ժամանակ,
Զգայուն հոգով այնքան ցավեցիր,
Այնքան ջանացիր, որ մենք հաշտ մնանք,
Քեզ եմ նվիրում այս տրտում՝ (?) էջը
Քե՛զ, որ հասկացար այն ծանր վեճը։

[Այսպիսի] ծանրը ու լուռ վեճերով
Մաշվում է մեր կյանքն.... սպառվում,
Հոգնում . . . . . .
Հոգու սրբազան կրակը մարում,
Անպտուղ դառնում կյանքը բեղմնավոր,
Թարշամում, ինչպես ծաղիկ մենավոր։

Այսպես է մեր մեջ գրողի կյանքը...
Եվ մեր աշխարհքում խավար (?) ու մթին,
Ո՞վ է հասկանում այս վեհ տանջանքը
Ո՞վ է թափանցում գրողի հոգին.
[Եվ ո՞վ է առնում իր սրտին մոտիկ...
Ո՞ւր է այն մարդը, ո՞ւր են այն մարդիկ։]

Ես ևս առած քնար գրողի,
Թեև շատ անշուք, երերուն (?) ու կարճ,
Անցել եմ կյանքում մի դժվար ուղի,
Կանգնել եմ անթիվ փորձության առաջ.
Վիճել եմ – անցել... և այժմ գրում,
Քե՛զ, որ իմացար, քեզ եմ նվիրում։